

արժանապատուութեան պակասին, վասնզի հեռու մնալ ուղեցիկն աւետարանի հրաշա-
գործ, տեւական, բարախուն և տիեզերա-
կան սէրէն և եղբայրութենէն:

Եթէ Գորէբի մշուշը հետեւաբար կը
ծածկէր Սինան, սակայն կ'երևէին Բեթ-
զեհէմը, Երանութեան լեռը և Գորգոթան:
Ի դուր չէ որ Եղիան, հնութեան այդ տե-
սանողը Մովսէսին հետ միասին, փշշակիր-
ները կը դառնան Յիսուսին, Ալլակերպու-
թեան լեռան վրայ, ստեղծելու համար սի-
ւոյ այն հրաշալի կամուրջը, որ Հին Ուխտի
մշուշներու և փոթորիկներու մէջէն կ'եր-
կարի և կը շինէ Նոր Ուխտի անխորտակելի
կառանքը: Եղիան կը պարտուէր աստուա-
ծային սիրոյն մէջ, յայտնագործելով և նա-
խաձայնելով այն մեծ սէրը որ աստուա-
ծորդին յայտնութեամբ պիտի լեցնէր աշ-
խարհը, բռնկցնելով մարդոց հոգիները
մարդկային եղբայրութեան և Աստուծոյ
տիեզերական հայրութեան մեծ զգացումով:

Պարտութիւններ կան որոնք յազթա-
նակներ կ'արժեն, երբ փլատակի վերածելէ
վերջ մեր կամակոր ու կամշոտ հպարտու-
թիւնն ու վայրի բնազդները, մեր հոգին
կը լեցնեն արեւով ու սիրով, խաղաղու-
թեամբ և քաղցրութեամբ, ու անոր առջև
կը բանան հորիզոնը նոր հեռապատկերնե-
րու: Վերստին ծննդեան խորհուրդն է այս,
զոր Աստուած գիտէ պարգեւել հոգիներ-
բուն:

Այս է կերպը Աստուծոյ իր զաւակները
ճշմարտութեան գիտակ ընելու: Կերպ մը՝
լեցուն իմաստութեան և զեղեցիկութեամբ:
Նախ անոնց կը ցուցնէ իրերու լոյսը, և
այս միայն վայրկեանի մը համար, յետոյ
տակաւ երբ անոնք սքանչացումի մէջէն,
անոնց կը բանայ բովանդակ ճշմարտու-
թիւնը: Եղիան իր այս սքանչելի տեսիլ-
քէն վերջ կը մահէր աստուածային յայտ-
նատեսութեան լոյսին մէջ, ճանչնալով ի-
րական կերպանքը Աստուծոյ:

Ե.



ՈՏՆԼՈՒԱՅ

(ԽՈՆԱՐՀՈՒԹԻՒՆ)

Խոնարհութիւնը օկիզմը է
հեմարթ մեծութեամբ:

Յաւէտ պանծալի մեր հայրերը, Աւագ
Հինգշաբթի օրը, երեկոյեան տեղի ունե-
ցած խորհրդաւոր և սրտազբաւ արարողու-
թեան անունը դրած են Ուտնլուա՞յ:

Ոսնլուան, Հոգի՛, Յիսուսի կատարած
հուսկ տնօրէնութիւններուն է՛ն որտաշարժն
է և կը փնտռուի առհասարակ ամենէն,
մեծէն թէ պոտիկէն, թէ՛ և փսո՛ս, սա՛ ալ
իր հետաքրքրական և հաճելի հանդիսա-
դրումին և ո՛չ վեհ խորհուրդին համար,
որ կը մնայ փակ՝ գիրքերու մէջ, ընտրեալ-
ներուն համար միայն հասկնալի...: Արդ-
եօ՞ք կը բաժնեն, Հոգի՛, փորձառու մար-
դու համոզումս, թէ ինձմէ կը բաժնուիս,
ըսէ՛ համարձակ և տո՛ւր պատճառներդ,
շա՛տ գոհ կ'ըլլամ:

— Երէ՛ցս, կը կարծեմ թէ Ոսնլուան
կը փնտռուի թէ՛ իբրեւ ակնահաճոյ տեսա-
րան և թէ՛ իբրեւ պատկերը խոնարհութեան
խորհուրդին: Բայց կարծիքս դժբախտաբար
աւելի կը հակի ձերիկն: Թողունք սակայն
այլեւս զանգուածային սովորութիւն գար-
ձած մոլորանքը և առնենք ոգին Յիսու-
սին, որ Ոսնլուան տուաւ իբրեւ օրինակ
խոնարհութեան իսկական մեծութեան:

— Այո՛, Հոգի՛, Յիսուս զայն օրինակ
տուաւ քրիստոնեայ մարդուն, որ ինչքան
ալ մեծ ըլլայ շնայարանայն՝ այլ խոնարհի
աւելի, զի ճշմարտ մեծութիւնը կը փայլի
խոնարհութեան մէջ: Երէ՛ց. — Աստուած
ամբարտաւանից հակառակ կայ, տայ շնորհ
խոնարհաց՝: Դարձեալ՝ չոր խոնարհեցու-
ցանէ զանձն՝ բարձրացնո՛ւ:

Միե՛կ, Հոգի՛, հպարտութեան մեծ մեղ-
քին, և անոր հակառակ մեծ առաքինութիւն՝
խոնարհութեան մասին այլուր խօսած ենք
երկարօրէն: Հոս եթէ կը յիշենք զանոնք և
պիտի յամենանք անոնց առջև, պատճառն
է նախ, որ հպարտութիւնը նոյնիսկ մեր
կրօնական և բարոյական կեանքին մէջ
գործնապէս զբաւած միշտ բարձր ու լայն,
ամենէն սիրուած ու փնտռուած տեղն է,
հակառակ իրեն հակոտնեայ առաքինու-

թեան, խոնարհութեան՝ մեր սրտերուն փափուկ ու տաքուկ անկիւնին մէջ բռնած տեղւոյն. տեղ՝ միշտ սակայն ճեսական և անճեսա...: Երկրորդ՝ Յիսուսի տուած օրինակին պատկերին անբաղդատելիօրէն ճիշդ, սիրուն և սրտառու ըլլալը, պատկեր՝ զոր ինչքան շատ և լաւ գծենք այնքան քիչ է, մեր յամառօրէն հպարտ և անուզողայ բնութեան համար... Եթէ կ'ուզես, Հոգի՛, մէջ բերենք նաև խոնարհութեան ուրիշ մէկ դասը Յիսուսին — դաս գեղեցիկ և յաւէտ անմոռանալի — զոր տաւա իր հպարտ աշակերտներուն: Բայց, պիտի բռնէք անշուշտ. — ինչ օգուտ, երբ երկու հազար տարիներ վերջ, զայն ամէն օր կարգադրել կ'ենին իսկ, կը մնայ խուլ և տգէտ այդ դասին, կը մնայ կ'ըսեմ՝ աւելի հպարտ քան էրեք և ցանկացող, ձգտող գեղեկայութեան...:

— Երէ՛ցս, զգո՛շ, դարձեալ խոռվեցաք...:

— Մի՛ վախճար, Հոգի՛, այո՛, դարձեալ յուզուեցայ և խռովեցաւ հոգիս, մանաւանդ ի յուշ՝ որ քրիստոնէութիւնը սիրոյ, խոնարհութեան և եղբայրութեան կրօնքն է և կան եկեղեցականներ, որ ըլլալով հպարտ և եղբայրասեաց, կը յաւակնին ըլլալ քրիստոնէայ և յաղորդները Յիսուսին...: Բայց վստահ եղիր, պիտի ըլլամ ճշմարտախօս՝ բայց զուսպ: Հետեւաբար կը շարունակեմ խօսքերս:

* * *

Եթէ կ'ուզես, Հոգի՛, յիշեմ այդ սիրուն և յաւէտ անմոռանալի պատկերաւոր դասը Յիսուսին:

— Ծնորհակալ կ'ըլլամ, Երէ՛ցս, և անշուշտ ձեր բացատրութիւնները աւելի՛ լաւ կը հասկնամ:

— Ս. Աւետարանին մէջ կը կարդանք թէ Յիսուսի աշակերտները, միշտ տոգորուած ու տարուած աշխարհիկ ոգիով, կը վիճէին թէ իրենցմէ ո՞վ ամենէն մեծը պիտի ըլլայ Երկնքի Արքայութեան մէջ: Ափսո՛ս, Հոգի՛, հակառակ իրենց Վարդապետին գրեթէ ամենօրեայ խօսքերուն և խորիմաստ գործերուն, անոնք տակաւին չէին հասկըցած «Երկնքի Թագաւորութիւնը» և զայն կը չփոթէին — ո՛հ, կաշկանդուփեւր մոլութիւններուն և վարժութիւններուն — «Երկրի Թագաւորութեան» հետ: Յիսուս,

կ'ըսէ Ս. Աւետարանը, ելաւ, իբրև սրբի սփածաւ զենիակ և սկսաւ լուալ աշակերտներուն ոտքերը և զանոնք սրբեց զենջալով: Երբ կարգը եկաւ. Պետրոսին, ան, ինչպէս միշտ, այդ անգամ ալ պարզօրէն խորհելով մարդկայինը, մերժե՛ց լուալ տալ Յիսուսին իր ոտքերը. — «Տէ՛ր, զո՛ւն իմ ոտքերս պիտի չուռած»: Յիսուս պատասխանեց. «Ինչ որ կ'ընեմ ես, դուն հիմա չես հասկնար, բայց յետոյ պիտի հասկնաս»: Պետրոս յամառ և տգէտ, խորհելով թէ պատշաճութեան գէ՛մ կը մեղանչէ, «յախտեան» պիտի չլուսաւ զուն իմ ոտքերս» ըսաւ Յիսուսին: «Եթէ զքեզ չլուսամ, դուն բաժին պիտի չունենաս ինծի հետ»: — «Տէ՛ր», ըսաւ այն ատեն Սիմոն Պետրոս, «ո՛չ միայն ոտքերս այլ նաև ձեռքերս ու գլուխս»:

Յիսուս իր աշակերտներուն ոտքերը լուալէ վերջ — կը կարդանք Ս. Աւետարանին մէջ — առաւ իր զգեստները, դարձեալ նստաւ սեղան և ըսաւ անոնց. «Գիտե՛ք թէ ինչ ըրի ձեզի: Դուք զիս կը կոչէք Վարդապետ և Տէր, և շիտակ կ'ըսէք վասնզի եմ իբրապէս: Արդ, ես Վարդապետ և Տէրս, ձեր ոտքերը լուացի, պէտք է որ դուք ալ իբրապէս ոտքերը լուաք: Վասնզի օրինակ մը տուի ձեզ, ինչպէս որ ես ձեզ ըրի՝ դուք ալ ըրէք: Ծշմարիտ, ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, ծառան մեծ չէ՛քան իր Տէրը, ո՛չ ալ զրկուածը քան զայն՝ որ կ'ըլլած է զինքը»:

— Կարծեմ, Երէ՛ցս ամենուս անմահ Վարդապետը կ'ըսէ ուրիշ տեղ մըն ալ առիթ գտնելով Զեքիթէոսի որդիներուն մօրը խնդրանքը — մայրեր, մանաւանդ կարճամիտ և հպարտ, ինչերո՞ւ արժանի չեն գտներ իրենց զաւակը, որ, ըստ իրենց, ամենէն գեղեցիկը, ազնուականը և իմաստունն է մարդոց — կ'ըսէ իր աշակերտներուն. «Գիտե՛ք թէ հեթանոսներու իշխանները կը տիրեն անոնց, և մեծամեծները կ'իշխեն անոնց վրայ: Այսպէս պիտի չըլլայ ձեր մէջ. ով որ ձեր մէջէն մեծ ըլլալ կ'ուզէ, պիտի դառնայ ձեր սպասաւորը, ու ձեր մէջէն այն որ առաջին ըլլալ կ'ուզէ՝ պիտի դառնայ ձեր ծառան: Ինչպէս որ Որդին մարդոյ չեկաւ ծառայութիւն ընդդէմէն:» ալ ծառայելու, և իր անձը շատերուն համար փրկանք տալու»:

— Այո՛ր Հոգի՛, լա՛ւ յիշեցիր: Քրիստոնէութիւնը, անգամ մըն ալ ըսենք՝ կրօնքն Ե սիրոյ, եղբայրութեան, հաւասարութեան եւ խոնարհութեան,

— Անո՛ր համար, Երէ՛ցս, գերազանցեալ վէճերը որ կը շարունակուին մինչև մեր օրերը . . .

— Այո՛ր Հոգի՛, բայց . . . Քրիստոնէական կրօնքը լաւ հասկեցողներուն և անոր ոգիին ճիշդ թափանցողներուն համար չեն գերազանցեալ տալ վէճերը:

— Վա՛յ անոնք որ այսպիսի վսեմ կրօնքին մէջ նոր կրօնք մը հաստատել կ'ուզեն . . .

— Հոգի՛, ար ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ . . . » Բայց . . .

— Բայց թի՛չ, Երէ՛ցս, դարձեալ յուզուած կուլաք, չէ՞ որ ուխտեցիք ըլլալ ներող, հանդուրժող, համբերատար և մեալ յուսարից:

.

— Հոգի՛, իրաւունք ունիս, ուխտած էի չգայրանալ և թափած արցունքներս չեն զայրութի, այլ են ինքնաբեր և միայն յուզուած, խռոված հոգիի, չէ՞ որ մարդ եմ և Երէց . . . Ըսէ՛, ի՛նչպէս չխռովիմ և չլամ՝ երբ մտովի բաղդատեմ խոնարհութիւնը Աստուածորդւոյն և հպարտութիւնը մարդիկ, նոյնիսկ եկեղեցական . . .

— Երէ՛ցս, թոյլ տուէք աւելորդ անգամ մըն ալ ձեզ յիշեցնել: Ըսէ՛ք, դուք որ խելացի և փորձառու անձ մըն էք, կը ճանչնաք մարդիկը ներսէն և ո՛չ ինծի պէս դուրսէն. և ե՛վ մարդոց որդիներէն տուած է այսպիսի դաս խոնարհութեան և մահաւանդ՝ գործնապէս և կեանքով: Այո՛, Երէ՛ցս, բոլոր մարդիկ, աշխարհի սկիզբէն մինչև այսօր, որ դարն է դատութեան և իմաստասիրութեան, դարը՝ խորհուրդի և ճշմարտութեան, ծափ զարնելով մէկտեղ՝ խոնարհած խոնարհութեան առջև, գերի իրենց մեծամիտ եսին, եղած ու միացած են հպարտ ու գոռոզ, ծառայեցնող քան ծառայող . . . Ինչ, Երէ՛ցս, կը կարծէ՞ք թէ չեն գիտեր թէ իսկական մեծութիւնը կը կայաւայտ ծառայելուն մէջ: Այո՛, Երէ՛ցս, գիտեն, բայց զիսեայր միտ կարեւոր չեն . . .

Երէ՛ցս, լաւը կը վայելէ ինծի, որ բաղդատմամբ ձեզ՝ տպէտ եմ և անփորձ. բայց թէ և տխուր ու ջախջախուած՝ կը մնամ

զուսպ, առանց լացի և արցունքի: Հոգիով միայն լո՛ւս հանդիսատես՝ կը ծափեմ այսօր խոնարհ Յիսուսը և գովքը կ'ընեմ խոնարհ ծառայութեան և կը խորհիմ . . . և կ'աղօթեմ նո՛յնիսկ եկեղեցականներուն համար — պատի՛ւ արցառութիւններուն — որոնք ամէն օր կարգալով մէկտեղ Աւետարանին գեղեցկութիւնները և այսօր տեսնելով իրենց վարդապետին զմայելի խոնարհութիւնը, կը փորձուին միշտ և կ'ըլլան ու են՝ Տէր քան ծառայ, զոր ըլլալու կոչումը ստանձնած են . . . Տէս, խորհէ՛ և դատէ՛ այսպէս՝ պաղարիւն . . .

— Ապրի՛ս Հոգի՛, օգտուելով լացես՝ խօսեցար աւելի լաւ քան զիս: Թոյլ կուտամ արդեօք աւելցնելու գեղեցիկ խօսքերուդ, թէ անոնք, եղբայրակիցներս, կը մնան դեռ խորապէս ետամուլ: Յիշէ՛ Փրանսերէն առածը. — «L'habit ne fait pas le moine»: Այո՛, Հոգի՛, անոնք հագուստով միայն եկեղեցական են: Յիսուսի կողմէն պատգամուած և իր սուրբ արիւնով կընքուած ճշմարտութիւնները, այո՛, կը կարդան և կ'ընդունին իսկ, ի հարկին կը քարոզեն ալ, բայց ամառս, չեն ապրիր զանոնք և յիմարտութիւնը ունին կարծելու թէ տակաւին ժամանակ ունին, յաւիտեանակա՛ն են. ե՛ւ կամ . . . բոլորովին սրբապիղծ և անհաւատ են . . .

— Ո՛չ, Երէցս, չեն կրնար անհաւատ ըլլալ, այդ պիտի նշանակէր կեղծ, խաչագող ըլլալ . . .

— Կը ներես Հոգի՛, թերեւ կիրք ելած՝ չափազանցեցի զգացումս. բայց ո՞ւր ստոյգ է որ, մենք եկեղեցականներս, կամ Ս. Գիրքը և անոր պատգամած ճշմարտութիւնները կ'առնենք օտաւապէս և կը մեղցնենք անոնց ոգին և կամ Քրիստոսի հիմնած իսկալ կրօնքին բուն էութեան թափանցիլու նեղութիւնը յանձն չենք առնիր, որովհետեւ այդպէ՛ս կուզաւ մեր գործին որ զուտ աւախաւոր չենք . . .

Օրինակ՝ առնենք պարագան Ս. Պետրոս առաքեալին, Պետրոս — Pierre — կը նշանակէ քար կամ վիմ: Երբ առիթով մը, Պետրոսի հոգիին իսկ ինքնաբեր ժայթքող մէկ պատասխանին վրայ, կ'ըսէ Յիսուս. — «Պետրե՛, զուե՛ վիմ ես, այդ վիմին վրայ պիտի շինեմ իմ Եկեղեցին և դժուրքի

զոններն անգամ զայն պիտի չկարենան յաղթահարել», պետք է՛ր որ այս խօսքին տրուէր այն իմաստը, որ ոմանց գործին կուզայ և անոնք տային գերագահութիւն մը Պետրոսին և իբրեւ թէ՝ անոր հիմնած Եկեղեցիին։

Ո՛չ, Հոգի՛, Պետրոս վեմ չե՛ այդ իմաստով, և ո՛չ ալ դժոյխ իրապէս գոյութիւն ունեցող վայր մըն է անշէջ կրակի։ Անոր հաւատքին չափ անհո՛ւն է և ամուր միւս առաքեալներուն հաւատքը, և Յիսուսի աչքին բոլոր աշակերտներն ալ հաւատար են և չունին որևէ խտիր իրարմէ։ Խեղճը գլուխը Ս. Աւետարանը ի ձեռնին ո՛վ կ'ընդունի թէ միւս առաքեալները, որ Յիսուսի Համարձակութիւն առթիւ հրաման ստացան ցրուիլ աշխարհի չորս կողմերը, քարոզելու Ս. Աւետարանը և զինք — Յիսուսը — ընդունողները մկրտելու, չե՛ն հաւատքի վէմեր... Այո՛, Հոգի՛, կ'ընդունիմ թէ իբրեւ թէ անոր կողմէն հիմնուած Եկեղեցին ունի շատ իրաւունցներ, իրաւունքներ՝ իբրեւ մեծ, կարգապահ, և իր հովիւներուն թիւովը, անոնց գիտութեամբը, ձեռներէցութեամբը, գործերովը և զոհողութիւններովը գերազանցօրէն պատկառելի Եկեղեցի, և ատոնցմով արժանի՛ է սիրոյս, յարգանքիս և հիացումիս, բայց աւելի՛ արտաբանութեան միայն. ներսուս՝ իր մեծութեան, փառաւորութեան, ուրիշներուն տիրելու, տուելութեան, այլամբող և արհամարհական աշխարհիկ ոգիով՝ նուազ քրիստոնէականէ և Այո՛, թո՛ղ ըլլար անշուք, խոնարհ, օւնենար ցանցառ թիւով հովիւներ և հօտ, բայց կրէր յիսուսեան ոգի և քրիստոնէական նոր ոգիին չխառնէր հի՛ն, անճի՛շդ և մեռած ոգին աշխարհիկ և հեթանոսական, զոր հիմնովին փոխել եկած էր Յիսուս, ստեղծելու համար նոր Սեկիմ, նոր Սեկիբ և նոր մարդ... Ո՛չ, Հոգի՛, կը կրկնեմ և կը շեշտեմ, Պետրոս չէ՛ր և չէ՛ էն մեծը առաքեալներուն և գլուխը Եկեղեցւոյ։ Եկեղեցւոյ միակ գլուխը Յիսուսն է, թէ՛ անտեսանելի, և Պետրոսին քառուցութեամբ հիմնուած Եկեղեցիներն ալ հաւատար են միւս Եկեղեցիներուն։ Աւ գետնէմ խօսիր, Պետրոսին իսկ վկայութեամբ հաստատուած ճշմարտութիւններուն մասին, որոնք հիմնովին հակառակ են ծափօթ Եկեղեցւոյ ոգիին։

Ո՛չ, Հոգի՛, Պետրոսին անունով երգում ընդունելը այս կերպ սխալ ըմբռնում մը պէտք է՛ր որ ունենային, մանաւանդ՝ պէտք է՛ր դաւէին Յիսուսի ճշմարիտ և նոր կրօնքին յայնճի ոգիին դէմ, որ սե՛ր է, որ եղբայրութիւն և հաւասարութիւն է, որ վերջապէս խոնարհութիւն է, և չտածէին առհամարհանք, անօրինելութիւն և հպարտութիւն քոյր Եկեղեցիներուն հանդէպ, որոնք՝ հաստատուած երեք Տիեզերական ժողովներու քուէարկած որոշումներուն վրայ, ի հնունք մի՛ էին և կը ճանչնային Քրիստոսը իրենց անտեսանելի գլուխը։ Այդպէսով ա՛նոնք պիտի մնային միշտ բարձր և ներգաշնակ Յիսուսի Ոգիին հետ և հետեաբար անմատչելի՝ քննադատական որևէ հարուածի։ Անոնք առնելու և բացատրելու էին աւելի լայնախոհ ոգիով մը։ Յիսուսին այդ խօսքը. — «Պետրէ՛, դուն վեմ ես և այդ վեմին վրայ պիտի շինեմ իմ Եկեղեցին»։

Ո՛չ, Հոգի՛, Պետրոսին անունը վեմ չի նշանակիր և իր յայտնարեցած ամուր հաւատքը միայն — որ իրեն միայն մենաշնորհ էր և այս առթիւ կ'արժէ յիշել անոր մէկէ աւելի սայթաքումները — պիտի ըլլար Եկեղեցիին հիմը։ Այդ ամուր հաւատքը ինչպէս ըսի ընդհին էր հաւասարապէս բոլոր առաքեալներուն — մանաւանդ հրաշքով մը վերջինիս Պօղոս առաքեալին և և երբեք պէտք է՛ր որ ըլլար անոնց մէջ մեծի և ազգիկի որևէ խտիր։ Մեծութեան և պզտիկութեան զաղափարն ու զգացումն ունէին — ըստ Յիսուսի — աշխարհի օրիւնները միայն. իրենք «եղբայրներ» էին և իրենց մէջ մեծը պիտի ըլլար ամենուն «սպասաւորը»։

— Երէ՛ցս, բայց չէ՛ք կարծէր որ իսեպիմ քով կայ գործնականը և Պետրոսի հիմնած Եկեղեցին գահացում կուտայ այդ «գործնականին», գահացում կուտայ՝ աշխարհին եւ մարդոց, որ կ'ընդունին և կը խոնարհին միայն ուժին և գեղեցիկին առջև։

— Ո՛չ, Հոգի՛, Քրիստոնէութիւնը երբեք յարաբերականին կ'օրոքէ չէ, այլ կ'օրոքէ՝ բացարձակին։ Ան՝ իսեպ կրօնք է եւ յաւիտէ կ'աւարտուի։ Գահացում տալ գործնականին՝ պիտի նշանակէր քրիստոնէական կ'օրոքը սղաւաղել, պզտիկցնել, զայն յաւէտ փակել՝ տգիտութեան, նախապաշարումներու, ձեռն ու տառի մէջ. մինչ իր

պարտականությունն է պայքարիլ անոնց գէժ և մարդոց նայուածքները խզելով աշխարհէն ինչպէս որ էր, բարձրացնել բացարձակին, կատարեալին, Աստուծոյ, և հիմեւ ճշմարիտ Թագաւորութիւնը, այսինքն կեանքը ինչպէս որ պէտք էր ըլլար...

Այո՛, Հոգի՛, բանաւոր չափով մը կը հասկնամ յարգել «գործնականը», որովհետեւ կ'ապրինք իրական աշխարհի մը մէջ, և այդ աշխարհին չափով մը պէտք է տրուի իրաւունք։ Այո՛, պէտք է կ'ըսեմ՝ զանազանից աշատուրան իրականը վաղուան գաղափարականէն, բայց գէթ կ'ընտանացին մէջ խօսինք միայն ու միայն գաղափարականին, այսինքն հոս՝ Աստուծոյ մասին, որ չ'ընդունիր երբեք նուաղում, խաթարում և այլայլում, ըլլալով կայտառելիւն իսկ։ Պահելու ուղի գաղափարականը կ'ընտանացին մէջ, և կ'ընտանացին աշխարհին և անոր տկարութիւններուն վրայ, կարեւորութիւն և մեծ կարեւորութիւն տալով գործնականին և աշխարհին, օգնագործելի կ'օժնէ և աշխարհին — այնպէս ինչպէս որ է — օալ կ'աւելի քան իր իրաւունքը։

Այո՛, Հոգի՛, Յիսուսին տուած նոր պատկերացումը պէտք է կանգնել ըլլայ մեր կեանքին, զայն այսօր ապրինք կամ ոչ։ Արդ՝ ըսել կ'ուզեմ՝ որ չի ճանչնար երբեք մեծութիւն եւ խօսք, այլ կը ճանչնայ՝ միայն հաւատարմութիւն, եղբայրութիւն և խոնարհութիւն։

— Ծնորհակալ եմ, Երէ՛ցս, որ անգամ մըն ալ լսեցի և ձեր բերնէն, Յիսուսի նոր պատգամը։ Զայն, սեղան, երկուշաբթիէն պիտի դաւանեմ հիմը կեանքիս եւ բարոյականիս, զայն պիտի քարոզեմ նաեւ բոլոր միամիտներուն, ինչ որ ալ ըսեն ձեր ակնարկած Եկեղեցիները։ Այո՛, Երէ՛ցս, սեղան, Աստուծոյ և Յիսուս ինքն է, և ինքը միակ ամուր հիմը՝ կրօնական և բարոյական հաստատութիւններուն։ Եթէ ան ըլլայ՝ չկայ ըսել և միակ Զօրութիւնը՝ որմէ երբեք անմէն բան, որով կանգուն էր մնայ ամէն բան, և որով կը քաղցրանայ կեանքին ամէն դառնութիւնը...

Ուրեմն իմ ալ պատկառանքս և հիւսցումս Պետրոսի Եկեղեցիին, բայց ոչ չկըմ սէրս ու յարգանքս անոր ինչպէս որ է — ձեւ քան ոգի և կրօնի մէջ նոր կրօն մը՝ խորք քրիստոնէականին որ սեղ է, եղբայրութիւն եւ հաւատարմութիւն։

ՀԱՅԿԱԶՈՒՆ Ա. ՔԶՆԹ. ՈՍԿԵՐԻԶԵԱՆ

ԵՄՄԱՌՈՒՍԻ ԶԱՄԲՈՐԴՆԵՐԸ

«Ուն մեզ ագիր, զի ընդ երեկս
եւ եւ զարմամեալ եւ օրս. եւ
եւեռս ազանդ անդ ընդ նոստս»
(ՂԽԿ. ԻԿ. 13 - 35)

Ղուկասի Աւետարանին ունեցած ուրոյն գեղեցկութիւնը արգարեւ ուշագրաւ է միւս երեք Աւետարաններու կարգին։ Ան՝ իր Աւետարանին մէջ կը պատմէ և կը նկարագրէ մեր Տիրոջ երկրաւոր կեանքը. միայն գեղեցիկ ու զարգարուած ճոճով մը, որ իրեն յատուկ է։ Այս Աւետարանին կը պարտինք կարգ մը առակներ և նկարագրական պատկերներ, որոնք միւս երեք Աւետարաններուն մէջ կը պակսին։ Ասոնցմէ կ'ընտանացին յիշել հետեւեալները, Աւետարմը Ս. Կոյսին, այցելութիւնը Եղիսաբէթին, հովիտներու երկրպագութիւնը, Մուրին նկարագրութիւնը, Բրիտանո Տաճարին մէջ, Նայնի միամօր պատմութիւնը, յարուստ մարդը, կորսուած ոչ խաբները, Անառակ որդիին պատմութիւնը, մեծատան և տնտեսին առակը, հարուստին և աղքատ Ղազարոսին պատմութիւնը, տասը բորոտներու պատմութիւնը, փարիսեցիներն ու մաքսաւորները, Զաքէոսի նախանձախնդրութիւնը, Տիրոջ՝ Ս. Քաղաքին վրայ լալը, աղօթքը իր չարագործներուն համար, երկու աւագանները, Եմմաւուսի ճամբորդները և Տիրոջ համարածումը։

Երբ վերեւ յիշած մեր այս ցանկը աչքի առջև ունենանք, ալ չենք զարմանար թէ՛ ինչո՞ւ համար, աւանդութիւնը Զ. զարէն սկսեալ, Ղուկասը իբրեւ գեղեցկագէտ արուեստագէտ մը կը ներկայացնէ մեզի։

Ղուկասի Աւետարանին վերջին գլխուն ամենէն գեղեցիկ և հետաքրքրական պատմութիւնը Եմմաւուսի ճամբորդներուն պարագան է, որ ոչ միայն կենդանի պատմածք մըն է ինքնին, այլ նաեւ լեցուն է սրտագրաւ իրադարձութիւններով։ Թեւեւ հոն յիշատակուած Կղէովպատէն (Յուս